ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

31.05.2017թ. թիվ 26

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄՈՒՐԱԴ ՀԱԽՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Նաիրիի բաժնի 2017 թվականի մայիսի 15-ի թիվ 61-4/8-2039 գրությունն ու Պռոշյան համայնքի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի թիվ 1 արձանագրությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Մուրադ Հախոյանին չսահմանված տեղում առևտուր կատարելու համար ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով (յոթանասունհազար ՀՀ դրամ):
2. Որոշման մեկական օրինակ ուղարկել կողմերին:
3. Մուրադ Հախոյանին պարզաբանել, որ որոշումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում գումարը պետք է մուծվի 900115107063 հաշվեհամարին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքիղեկավար՝ Ա. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

01. հունիսի .2017թ թիվ 97

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏՅՈՊԱՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 163 –րդ և 164-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արթուր Մուրադյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017թ հունիսի 1-ից Պռոշյան համայնքի ղեկավար Արթուր Մուրադյանին տրամադրել 2017թ. հերթական արձակուրդի մի մասը՝ 15 աշխատանքային օր: Աշխատանքի ներկայանալ 2017թ.-ի հունիսի 22-ին:
2. Համայնքի ղեկավարի պարտականությունները ժամանակավոր դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Արեյանի վրա:
3. Որոշումը ծանոթացնել անձնակազմին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Մուրադյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am, proshyan2413@rambler.ru

# ՈՐՈՇՈՒՄ

01 նոյեմբ 2017 թվականի N 98

## ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 3-ի թիվ 20 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Համայնքային սեփականություն հանդիսացող /վկայական N26042017-07-0049/ ծածկագիր /07-053-0078-0062/ 0.0026 հա բնակավայրերի խառը կառուցապատման հողամասը և նրա վրա
օրինական ճանաչված ավտոտնակը ուղղակի վաչառքով / հողամասը՝ կադաստրային լրիվ արժեքով, ավտոտնակը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի /դ/ ենթակետով օտարել Սուրեն Հովհաննիսյանին:
Ավտոտնակի համար՝ 22.1քմ x 2600դրամ = 57460.0 դրամ:
Հողամասի համար՝ 0.0026հա x 4524դրամ = 117624.0 դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր /07-053-0076-0004/ 0.00521 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա օրինական ճանաչված ավտոտնակը ուղղակի վաչառքով / հողամասը՝ կադաստրային լրիվ

արժեքով, ավտոտնակը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի /դ/ ենթակետով օտարել Նվեր Կորյունի Կնյազյանին:

Ավտոտնակի համար՝ 20.83քմ x 2600դրամ = 54158.0 դրամ:

Հողամասի համար՝ 0.00521հա x 4524դրամ = 235700.4 դրամ:

3.Որոշում ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝/ժպ/ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am, proshyan2413@rambler.ru

# ՈՐՈՇՈՒՄ

01 հունիսի 2017թ. Թիվ 99

## ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԱՍՆԱԳՈՄԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 10-ի թիվ 16 որոշումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Համայնքային սեփականություն հանդիսացող /վկայական N 21032017-07-0040 / կադաստրային ծածկագիր /07-053-0230-0041 / 0.06 հա և /վկայական N21032017-07-0034 / ծածկագիր 07-053-0322-0157/0.0561 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասերը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով կադաստրային լրիվ արժեքով օտարել Անդրանիկ Վարազդատի Հարությունյանին.

**Հողամասերի համար**

**0.06 հա x 245000 դրամ = 14700.0 դրամ:**

**0.0561 հա x 245000 դրամ = 13744.5 դրամ:**

2.Համայնքային սեփականություն հանդիսացող /վկայական N20032017-07-0028/ ծածկագիր /07-053-0065-0021/ 0.00269 հա բնակավայրերի խառը կառուցապատման հողամասը և նրա վրա օրինական ճանաչված ավտոտնակը ուղղակի վաճառքով / հողամասը՝ կադաստրային լրիվ արժեքով, ավտոտնակը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի /դ/ ենթակետով օտարել Մուրադ Սերոբի Պետրոսյանին:

**Ավտոտնակի համար՝ 22.8քմ x 2600դրամ = 59280.0 դրամ:**
**Հողամասի համար՝ 0.00269հա x 4524դրամ = 121695.6 դրամ:**

3. Համայնքային սեփականություն հանդիսացող /վկայական N22092015-07-0051/ ծածկագիր /07-053-0064-0050/ 0.00979 հա բնակավայրերի խառը կառուցապատման հողամասը և նրա վրա օրինական ճանաչված օժանդակ շինությունը ուղղակի վաճառքով / հողամասը՝ կադաստրային լրիվ արժեքով, օժանդակ շինությունը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի /գ/ ենթակետով օտարել Սուսաննա Գուրգենի Գաբրիելյանին:

**Օժանդակ շինության համար՝ 27.5քմ x 5200դրամ = 143000.0 դրամ:**
**Հողամասի համար՝ 0.00979հա x 4524դրամ = 442899.6 դրամ:**

4. Համայնքային սեփականություն հանդիսացող /վկայական N27052016-07-0052/ ծածկագիր /07-053-0021-0030/ 0.0033 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա օրինական ճանաչված անասնագոմը և պարիսպը ուղղակի վաճառքով / հողամասը՝ կադաստրային լրիվ արժեքով, օժանդակ շինությունը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի /գ/ ենթակետով օտարել Պավլիկ Վասպուրի Սարգսյանին:

**Անասնագոմի համար՝ 34.08քմ x 5200դրամ = 177216.0 դրամ,**
**պարիսպի համար՝ 3.5քմ x 5200դրամ = 18200.0դրամ:**
**Հողամասի համար՝ 0.0033հա x 4524դրամ = 149292.0 դրամ:**

**5.Որոշում ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝/ժՊ/ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, փ. Անդրանիկի 13
Էլ. հասցե , proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 06 2017 թվականի N 100

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի $43^1$ -րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Ոստիկանության Նաիրիի բաժնի պետի 2017 թվականի մայիսի 26- թիվ 67-4/8-2224 գրությանը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հարուցել վարչական վարույթ և կատարել լսումներ
2. Վարչական վարույթի հարուցման վերաբերյալ ծանուցել կողմերին
3. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Մ. Գաբրիելյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/ԺՊ/ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Անդրանիկի 13

## ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2017թ. թիվ 101

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՉԱԳԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անդրանիկ Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող /վկ.2347596/ կադաստրային ծածկագիր /07-053-0065-0004/ 0.0081հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասին տալ հետևյալ հասցե՝ Գ.Չաուշի խճուղի թիվ 6/1 հասցե:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանին սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ `/ստ/ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պռոշյան Անդրանիկի 13
էլ.հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

# ՈՐՈՇՈՒՄ

06 հուլիսի 2017թ. թիվ 103

## ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 80-րդ հոդվածի դրույթներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ մասի 46.2 կետի, հիմք ընդունելով Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 10-ի թիվ 17 որոշումը և մրցութային հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 29-ի թիվ 1,2, 3 արձանագրությունները.որոշում եմ

1.Պռոշյան համայնքի Անդրանիկի փողոց 20/1 հասցեում գտնվող 0.0054 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված, Պռոշյան համայնքի բնակիչ Մկրտիչ Սամսոնի Թադևոսյանին՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով՝ տարեկան տասներկու հազար դրամ վարձավճարով:
2. Պռոշյան համայնքի Անդրանիկի փողոց 6/30 հասցեում գտնվող 0.00376 հա բնակավայրերի խառը կառուցապատման հողամասը տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված, Պռոշյան համայնքի բնակիչ Մուրադ Սերոբի Պետրոսյանին՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով՝ տարեկան ութ հազար դրամ վարձավճարով:
3.Պռոշյան համայնքի Գ.Չաուշի խճուղի 5/25 հասցեում գտնվող 0.00778 հա բնակավայրերի խառը կառուցապատման հողամասը տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված, Պռոշյան համայնքի բնակիչ Արթուր Ռոմիկի Ասեյանին՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով՝ տարեկան տասնչորս հազար դրամ վարձավճարով:
4.Հողամասերը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության / Հողային օրենսգրքի / 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5.Կառուցապատման իրավունքով տրամադրված 0.0054 հա,0.0037հա, 0.00778 հա հողամասերի համար կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետներ՝ Կ.Ադամյանին և Ց.Ռզգոյանին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝/ԺՊ … ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

06. հունիսի 2017թ թիվ 104

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՎԵԼ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով դրամական օգնություն տրամադրելու նպատակով ներկայացված դիմումները և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջն ու Պռոշյան համայնքի աշխատանքի և սոցիալական ծառայության վերաբերյալ հարցեր քննող հանձնաժողովի եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն

| | Անուն Ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1 | Արթուր Բաղդասարյան | 50.000 դրամ |
| 2 | Վաղինակ Խաչատրյան | 60.000 դրամ |
| 3 | Փառանձեմ Մխիթարյան | 20.000 դրամ |
| 4 | Հովհաննես Համբարձումյան | 20.000 դրամ |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | ընդամենը | 150.000 դրամ |

Համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Արեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

06. հունիսի 2017թ թիվ 103

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների հուղարկավորության համար դրամական օգնություն տրամադրելու մասին ավագանու 18.12.2013թ թիվ 37 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ներքոհիշյալ հանգուցյալների ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն

| | Անուն Ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1 | Վարսենիկ Եղիազարյան | 50.000 դրամ |
| 2 | | |
| 3 | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | ընդամենը | 50.000 դրամ |

Համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Արեյան